# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 41 - 42 (16640) ՇԱԲԱԹ, 26 ՄԱՅԻՍԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՀՈԲԵԼՅԱՆ

# ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ




*Մայիսի 26-ին, Վրաստանի առաջին ժողովրդավարական Հանրապետության 100-ամյա հոբելյանի առիթով, Թբլիսիում անցկացվելիք միջոցառումներին կմասնակցեն 6 երկրի նախագահներ, Եվրամիության կառույցների ղեկավարներ:*

Հոբելյանական միջոցառումներին կմասնակցեն Հայաստանի, Լիտվայի, Լատվիայի, Ֆինլանդիայի, Լեհաստանի, Սլովակիայի նախագահները, Եվրահանձնաժողովի նախագահ Ժան Կլոդ Յունկերը, այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների 20-ից ավելի պատվիրակություններ:

Հոբելյանի առիթով, Թբիլիսիում կանցկացվի միջազգային տնտեսական գագաթաժողով Վրաստան ժամանած տարբեր երկրների նախագահների մասնակցությամբ: Ապա տոնական միջոցառումները կշարունակվեն Թբիլիսիի սովորող երիտասարդների պալատում, որտեղ 1918 թվականի մայիսին ընդունվեց Վրաստանի Անկախության հռչակագիրը: Նույն օրվա երեկոյան, Թբիլիսիի Զաքարիա Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում տեղի կունենա տոնական համերգ:

Հոբելյանական միջոցառումների շրջանակներում, Թբիլիսիում, Շինդիսիում, Վարձիայում, Կոջորիի ամրոցում, Դիդգորիում եւ Բաթումիում կանցկացվի նորակոչիկների զինվորական երդման արարողություն:

ՄԱՅԻՍԻ 26-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

## ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ. ԴԱՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

*1918 թվականի մայիսի 26, ժամը 16:50: Թիֆլիսի Գոլովինսկի (այսօր՝ Ռուսթավելու պողոտա) պողոտայում, Կովկասի փոխարքայի նախկին նստավայր (այսօր՝ Սովորող երիտասարդության պալատ): Անդրկովկասյան սեյմի վերջին նիստը, որը հռչակեց Անդրկովկասյան ժողովրդավարական Դաշնային Հանրապետության լուծարումը: Շենքի առջեւ հավաքված են մարդիկ եւ նշանակալից նորության սպասումներում են՝ լսվում են խոսակցություններ, ծափահարություններ, դուդուկի ձայն... Շենքի դահլիճում Վրաստանի ազգային խորհրդի անդամներն են... Եվ ահա, պատմական պահն է՝ նախագահության ամբիոնի մոտ Նոյե Ժորդանիային հոտնկայս մարդիկ դիմավորում են ծափահարություններով: Նոյե Ժորդանիան ելույթ է ունենում ողջույնի խոսքով, իսկ վերջում ընթերցում «Վրաստանի անկախության» ակտը»... Լսվում են բացականչություններ՝ «Կեցցե՜ Վրաստանի անկախությունը: Կեցցե՜ Վրաստանի անկախ պետությունը»:*

*Անկախության ակտի հաստատմանը ներկա էին Վրաստանի ազգային խորհրդի 42 անդամները, որոնց թվում էին քութայիսցի Բագրատ Մկրտումյանն ու գյումրեցի Միկիչ Վարդոյանցը, եւ անդամության 36 թեկնածուները: Նույն նիստում հաստատվեցին նաեւ նախարարությունների թիվը եւ կառավարության անհատական կազմը: Նաեւ ընդունվեց որոշում Վրաստանի ազգային ժողովը կոչել Վրաստանի խորհրդարան:*

Վրաստանի անկախության ակտի ընդունմանը նախորդել էին քաղաքական մեծ գործընթացներ: Անկախության ձեռքբերումն այնքան էլ դյուրին չէր, դրա համար անհրաժեշտ էր անցնել բոլոր անհրաժեշտ փուլերը, պարտադիր էր բոլոր անհրաժեշտ գործոնների առկայությունը՝ անկախությունը հնարավոր չէ պատկերացնել առանց ազգային գիտակցության հաստատման, ժողովրդավարական քաղաքական մշակույթի եւ ընդհանուր միտման: Վրաստանն անցավ այդ փուլերը: 19-րդ դարի երկրորդ կեսից Վրաստանի քաղաքական եւ մշակութային կյանքը վրաց ժողովրդին նախապատրաստեց անկախության հռչակման համար:

Հայտնի փաստ է, որ Առաջին աշխարհամարտում Ռուսաստանը Անտանտայի կոալիցիայի անդամ էր եւ Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի հետ միասին դիմակայում էր «Քառյակ» միությանը՝ Գերմանիային, Ավստրո-Հունգարիային, Օսմանյան կայսրությանը եւ Բուլղարիային: Ռուսական կայսրության վերջնական թուլացումն սկսվեց 1917 թվականի փետրվարյան հեղափոխության ժամանակ, ինչն արդյունք էր Առաջին աշխարհամարտում Ռուսաստանի կրած պարտությունների: Ռուսաստանը կանգնեց տնտեսական լուրջ ճգնաժամի առջեւ, քանի որ գյուղացիների ու բանվորների նշանակալից մասը զորակոչվել էր բանակ, եւ երկրում աշխատող ուժ գործնականում չէր մնացել: Դա հանգեցրեց արդ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

## ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ




*1918թ. մայիսի 28-ը հայոց պատմության շրջադարձային էջերից է: Այդ օրը հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Հայաստանը դարձավ միջազգային իրավունքի սուբյեկտ՝ մտնելով ինքնիշխան ազգերի համակեցության մեջ: Իսկ ամեն ինչ սկսվեց մայիսի 26-ին, երբ Անդրկովկասի սեյմի վերջին նիստում, սոցիալ-ժողովրդավարների խմբակցությունն առաջարկ մտցրեց սեյմի արձակման եւ Անդրկովկասի դաշնության կազմալուծման մասին: Սեյմը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց որոշում հայերի, վրացիների եւ ադրբեջանցիների մասին:*

Նշենք, որ դեռեւս 1917թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում կայացավ Արեւելահայերի առաջին համագումարը: Համագումարը քննության առավ արտաքին ու ներքին բնույթի մի շարք կարեւոր խնդիրներ: Վեր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՅՑ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

### ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հրավերով, երկրի առաջին ժողովրդավարական հանրապետության 100-ամյա հոբելյանական միջոցառումներին մասնակցելու համար, երեկ՝ մայիսի 25-ին, Թբլիսի ժամանեց Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը:*



Նույն օրը կայացավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հանդիպումը Հայաստանի նախագահի հետ:

Վրաստանի կառավարության ղեկավարը Արմեն Սարգսյանին շնորհավորեց նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ եւ շնորհակալություն հայտնեց Վրաստան այցելելու համար: Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ եղբայրական Հայաստանն էլ Վրաստանի նման նշում է երկրի անկախության 100-ամյա հոբելյանը, եւ երկու երկրների համար այս իրադարձությունները արտակարգ կարեւոր են: Վրաստանի վարչապետն ընդգծեց վրաց-հայկական բարեկամական խոր համագործակցության նշանակությունը եւ հույս հայտնեց, որ դրանք առաջիկայում է՛լ ավելի կուժեղանան:

Իր հերթին, Հայաստանի նախագահը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ հայտարարեց, որ իր համար մեծ պատիվ է եղբայրական ժողովրդի համար այս նշանակալից տարելիցին մասնակցելը:

Նշենք, որ նույն օրվա ուշ երեկոյան կկայանա Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպումը Արմեն Սարգսյանի հետ:

Մայիսի 26-ի օրվա երկրորդ կեսին Հայաստանի նախագահը կայցելի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱՄՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԷՐ, ԵՎ ՀՈՒՍՈՎ ԵՄ, ՈՐ ԼՈՒՐՋ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ»

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՎԱԿՈԽԵՑԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ

*Մայիսի 21-23-ը Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին աշխատանքային այցով գտնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում:*



Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը ԱՄՆ պետքարտուղար Մայք Փոմփեոյի հետ մասնակցեց Վրաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության հանձնաժողովի լիագումար նիստի աշխատանքին, ելույթ ունեցավ ռազմավարական համագործակցության ամենամյա համաժողովում: Մայիսի 23-ին Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց Վրաստանի առաջին հանրապետության կազմավորման 100-ամյակին նվիրված՝ ԱՄՆ-ում Վրաստանի դեսպանությունում կազմակերպած ընդունելությանը:

Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Մայք Փոմփեոյի, երկրի բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ:

Վրաստանի վարչապետի եւ ԱՄՆ-ի պետքարտուղարի հանդիպմանը կողմերը քննարկեցին վրաց-ամերիկյան ռազմավարական համագործակցության խորացման հեռանկարները, Հյուսիսատլանտյան ալյանսին Վրաստանի ինտեգրման գործընթացը, Հարավկովկասյան եւ Մերձավոր Արեւելյան տարածաշրջաններում ստեղծված իրավիճակի կապակցությամբ անվտանգության տեսանկյունից ծագած հիմնախնդիրները: Ամերիկյան կողմը հերթական անգամ ընդգծեց երկրի հստակ դիրքորոշումը Վրաստանի ինքնիշխանության, երկրի տարածքային ամբողջականության պաշտպանության հարցում: Կողմերը արծարծել են նաեւ ՆԱՏՕ-ի՝ Բրյուսելում կայանալիք առաջիկա գագաթաժողովը եւ նշել Վրաստանի հեռանկարը եվրատլանտյան ինտեգրման ճանապարհին: ԱՄՆ-ը պաշտպանում է ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի ձգտումը եւ դաշնակիցների հետ միասին գագաթաժողովում կհաստատի երկրի հաջողությունն այդ ճանապարհին: Մայք Փոմփեոն Վրաստանի վարչապետին երախտագիտություն հայտնեց միջազգային խաղաղարարական առաքելություններում վրաց զինծառայողների մասնակցության, միջազգային ասպարեզում ցուցաբերած աջակցության համար:

Իր հերթին, Վրաստանի վարչապետը Միացյալ Նահանգներին շնորհակալություն հայտնեց պետական անկախության հռչակումից հետո անցած 25 տարիների ընթացքում ԱՄՆ-ի կողմից ցուցաբերած աջակցության համար:

* * *

Աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլուն ԱՄՆ-ի փոխնախագահ Մայք Փենսը հյուրընկալեց իր սեփական տանը:

Ռազմավարական գործընկեր երկրների լիդերները, մանրամասն քննարկեցին երկու երկրների հարաբերությունների օրակարգում գոյություն ունեցող բոլոր հարցերը: Հանդիպմանը մեկ անգամ եւս հաստատվեց, որ ԱՄՆ-ը կանգնած է Վրաստանի կողքին՝ մարտահրավերների հաղթահարման, հնարավորությունների եւ հաջողությունների հասնելու գործում:

Հանդիպմանն ընդգծվել է Վրաստանի առանձնահատուկ տեղը, տարածաշրջանի հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությունում:

Վրաստանի վարչապետի եւ ԱՄՆ-ի փոխնախագահի հանդիպումը ընկերական մթնոլորտում տեւեց ծրագրվածից ավելի: Հանդիպման ավարտից հետո, Գիորգի Կվիրիկաշվիլին փոխնախագահի տանը հարգարժան հյուրերի մատյանում թողել է հուշ-գրառում:

* * *

Մայիսի 24-ին, հանրագումարելով Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած աշխատանքային այցի արդյունքները, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ ունեցել է նշանակալի հանդիպումներ ԱՄՆ պաշտոնատար անձանց հետ, քննարկվել են երկկողմ ռազմավարական հարաբերությունների օրակարգի բոլոր հարցերը:

Նրա խոսքով, ԱՄՆ կատարած աշխատանքային այցն արտակարգ նշանակալից էր եւ արդյունավետ, կոնկրետ տեղեկատվությամբ եւ կոնկրետ խոստումներով:

- Մենք հուսով ենք, որ սույն այցը կունենա լուրջ շարունակություն, մեր երկկողմ ռազմավարական գործընկերության առաջիկա խորացման տեսանկյունից,- ընդգծեց Վրաստանի վարչապետը:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

# «ՎՐԱՍՏԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ» ՀԱՅՑԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

## ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԱՄՐԱՊՆԴՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ»

*Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄիԵԴ) անց են կացվում «Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի (II)» գործով լսումներ:*



Օգոստոսյան պատերազմի գործով Վրաստանը 2008 թվականի օգոստոսի 11-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Ռուսաստանի դեմ հայց էր ներկայացրել: Սակայն, այն վերջնականապես ընդունված ճանաչվեց 2011թ. դեկտեմբերի 13-ին, իսկ 2012թ. ապրիլի 3-ին գործը ներկայացվեց Մեծ պալատի քննարկմանը: 2016 թվականի հունիսի 6-17-ն ընկած ժամանակահատվածում հարցաքննության են ենթարկվել 33 վկա, այդ թվում՝ 16-ը Վրաստանի կառավարության, 11-ը՝ Ռուսաստանի, իսկ 6-ը՝ Ստրասբուրգի դատարանի կողմից կանչված:

Վրաստանը մեղադրում է Ռուսաստանին 2008թ. օգոստոսին եւ հաջորդող ժամանակաշրջանում՝ իր դեմ ագրեսիա կիրառելու ու մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների զանգվածային խախտման, երաշխավորված մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով ու նրա արձանագրություններով:

Մասնավորապես, Վրաստանը կարծում է, որ Ռուսաստանը խախտել է Եվրակոնվենցիայի հոդվածները՝ կյանքի իրավունքի, խոշտանգումների արգելքի, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ազատության եւ անվտանգության իրավունքի, ազատ տեղաշարժվելու եւ այլն:

Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու խոսքով, «Վրաստանն ընդդեմ Ռուսաստանի» գործով ներկայացված են ամրապնդված ապացույցներ:

Ստրասբուրգում է գտնվում Վրաստանի պատվիրակությունը արդարադատության նախարարի տեղակալ Գոչա Լորթքիփանիձեի գլխավորությամբ:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՄԱՅԱ ՑՔԻՏԻՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒԲԵՆ ՍԱԴՈՅԱՆԻՆ

*Մայիսի 24-ին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը հանդիպեց Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Մայա Ցքիտիշվիլու հետ:*

Հանդիպմանը քննարկվեցին տրանսպորտի բնագավառում հայ-վրացական հարաբերությունների զարգացմանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

Ռուբեն Սադոյանն ընդգծեց Վրաստանից Հայաստան՝ Նինոծմինդա-Բավրա եւ Գուգութի-Գոգավան անցակետերի հարակից ավտոճանապարհների վերանորոգման աշխատանքների կարեւորությունը: Քննարկվեցին ճանապարհաշինության ոլորտին առնչվող այլ հարցեր եւս:

Նախարար Մայա Ցքիտիշվիլին իր հերթին ներկայացրեց գերատեսչության կողմից իրականացվող ծրագրերն ու նախագծերը եւ վստահություն հայտնեց, որ շոշափված հարցերը մոտ ապագայում կստանան իրենց լուծումները:





ԱՄՆ

### ԿՐԿԻՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ ԿՐԿԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ...

*Մայիսի 18-ին, Ամերիկայի Տեխաս նահանգի դպրոցներից մեկում տեղի ունեցած հրաձգության հետեւանքով, զոհվել է առնվազն 8 հոգի:*

*Հրաձգության հեղինակը դպրոցական է, ով ձերբակալված է: Տեղի ունեցածի դրդապատճառների մասին առայժմ ոչինչ հայտնի չէ:*

*Հաղորդվում է, որ զինված անձը մտել է դասարան եւ կրակ բացել դասասենյակում գտնվողների վրա:*

*Նշենք, որ ընթացիկ տարվա սկզբից դա ամերիկյան դպրոցներում արդեն 16-րդ միջադեպն է:*

ԻՍՐԱՅԵԼ-ՊԱՂԵՍՏԻՆ

### ԳԱԶԱՅԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

*Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 15-ին Երուսաղեմում ԱՄՆ դեսպանության բացման կապակցությամբ, Գազայի հատվածում լուրջ դիմակայություն սկսվեց իսրայելական զինված ուժերի եւ պաղեստինցիների միջեւ:*

*110-ից ավելի պաղեստինցիներ են զոհվել Գազայի հատվածում Իսրայելի զինվորականների ու ոստիկանության հետ բախումների հետեւանքով: Այս տվյալները, ինչպես հայտնել է Al Youm As Sabia թերթը, մայիսի 20-ին հրապարակել է Պաղեստինի առողջապահության նախարարությունը:*

*Պաղեստինի առողջապահության նախարարության տվյալներով, տեղի ունեցած ընդհարումների հետեւանքով, առավելապես Գազայի հատվածի արեւելքում, զոհվել է 112 պաղեստինցի, 13 հազար 190 արաբ տարբեր աստիճանի վերքեր է ստացել կամ թունավորվել գազից, որն իսրայելական ոստիկանությունն օգտագործում է ցուցարարներին ցրելու համար: Զոհվածների թվում 13-ը երեխաներ են, 18-ը չլրացած պատանիներ, վերքեր ստացածներից մոտավորապես 2 հազարը դեռահասներ են, վիրավորվել է նաեւ ավելի քան հազար կին:*

ՈՒԿՐԱԻՆԱ

### ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԱՊՀ-ԻՑ

*Մայիսի 19-ին Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն հայտարարեց, որ հրամանագիր է ստորագրել ԱՊՀ-ի բոլոր կանոնադրական մարմիններից Ուկրաինայի բոլոր ներկայացուցիչներին հետ կանչելու մասին: Արձագանքելով վերոնշյալ հայտարարությանը՝ ՌԴ ԱԳ նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան նշեց, որ Անկախ պետությունների համագործակցությունից (ԱՊՀ) Ուկրաինայի դուրս գալը քաղաքակիրթ մոտեցման դեպքում կարող է տեւել շուրջ մեկ տարի:*

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

### ՆԻԿՈԼԱՍ ՄԱԴՈՒՐՈՆ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

*Վենեսուելայի ազգային ընտրական խորհուրդը հրապարակել է երկրում անցկացված նախագահական ընտրությունների արդյունքները: Ըստ դրա, Նիկոլաս Մադուրոն հավաքել է 6,2 միլիոն ձայն:*

*Ընտրություններում Մադուրոյի մրցակից Էնրի Ֆալկոնի օգտին քվեարկել է ավելի քան 1,9 միլիոն, Խավիեր Բերտուչիի օգտին՝ 989 հազար, իսկ Ռեյնալդու Կիհադուի օգտին՝ ավելի քան 36,2 հազար ընտրող:*

*Այսպիսով, Նիկոլաս Մադուրոն դառնում է Վենեսուելայի հաջորդ նախագահը 2019-2025 թթ. ընկած ժամանակահատվածում:*

# Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ



***Մայիսի 24-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում պարգեւներ հանձնեց Վրաստանի Անկախության օրվան նվիրված մրցույթներում հաղթած ազգային փոքրամասնության ներկայացուցիչ 23 ուսանողի:***

Մրցույթին մասնակցում էին վրաց լեզվի նախապատրաստման հանրակրթական ծրագրում Վրաստանի մասշտաբով ներգրավված ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ուսանողները: Մասնավորապես, մրցույթին մասնակցեցին «1+4» հանրակրթական ծրագրի մասնակից ուսանողներ Թբիլիսիի պետական, Իլիայի անվան, պոլիտեխնիկական, բժշկական համալսարաններից, ՆԳ նախարարության ակադեմիայից, Ախալցիխեի, Գորիի, Բաթումիի, Քութայիսիի, Թելավիի, Սուխումիի պետական համալսարաններից:

Երեք ուղղությամբ իրականացվող նախագծի նպատակը երկրի հասարական-քաղաքական եւ սոցիալական կյանքում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ուսանողների ներգրավվածության մակարդակի բարձրացումը, արժեքների համակարգի ձեւավորումը եւ անկախության ու ազատության հասկացությունների ընկալումն էր:

Պարգեւատրման արարողության ավարտից հետո, Վրաստանի նախագահը շրջայց կատարեց վրացական առաջին համալսարանի հիմնադրման 100-ամյակին եւ առաջին հանրապետության մեկդարյա հոբելյանին նվիրված ցուցահանդեսին:

ՑԱՎԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻՑ ԶՈՀՎԵԼ Է 18 ՄԱՐԴ

***2017 թվականին բնական գազի արտահոսքից Վրաստանում զոհվել է 18 մարդ: Այդ մասին ասված է էներգետիկ օմբուդսմեն Սալոմե Վարդիաշվիլու զեկույցում:***

Ըստ զեկույցի, ամենաբարդ իրավիճակը վավերացվել է 2017 թվականի ձմռանը, ջեռուցման ժամանակահատվածում: Ամենաշատ դժբախտ պատահարները գրանցվել են տարածաշրջաններում, առանձնապես՝ Ռուսթավի քաղաքում, որտեղ միայն փետրվար-մարտին գազի արտահոսքից զոհվել է շուրջ տասը մարդ: Նշենք, որ Վրաստանի տարբեր տարածաշրջաններում գործում է գազաբաշխման երեք ընկերություն՝ «Ղազտրանսգազ-Թբիլիսին», «SocarGeorgia» եւ «Վրացօպտգազը»: Էներգետիկական օմբուդսմենի զեկույցի համաձայն, «Ղազտրանսգազ Թբիլիսի» ընկերության գործունեության տարածքում, 2017 թվականին գազի արտահոսքի պատճառով, տեղի է ունեցել երեք պայթյուն, որի արդյունքում քաղաքացիները կրել են գույքային վնաս: Մի քաղաքացի վիրավորվել է, զոհերի մասին տեղեկություն չկա:



«SocarGeorgia» ընկերության գործունեության տարածքում, անցյալ տարի գրանցվել է արտահոսքի տասը դեպք, որի արդյունքում զոհվել է երեք մարդ, իսկ «Վրացօպտգազի» գործունեության տարածքում գրանցվել է արտահոսքի 142 դեպք, որոնց արդյունքում զոհվել է 15 մարդ:

Նշենք, որ դժբախտ պատահարների կանխման նպատակով, Թբիլիսիում գործող գազի ընկերությունը քաղաքապետարանի հետ իրականացնում է սոցիալական մասշտաբային քարոզչություն: Ընկերությունը բոլորին առաջարկում է նման դեպքերում զանգահարել թեժ գիծ՝ 240-40-04 կամ 112 վթարային հեռախոսահամարներով: Կանչից հետո, դեպքի վայր կժամանեն մասնագետներ, ովքեր կստուգեն սարքերը, կտան համապատասխան հանձնարարականներ: Ընկերության մատուցած ծառայությունն անվճար է:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԹԻԲԻԼԻՍԻ ԲԱՆԿԻ

## ԱՎԱՐՏՎԵՑ ՔԱՌԱՄՅԱ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

***«Ասավալ դասավալի» թերթը կատարեց Վրաստանի Գերագույն դատարանի կողմից ընդունած որոշումը եւ հրապարակայնորեն հերքեց 2014 թվականին պարբերականի տարբեր համարներում TBC բանկի եւ Մամուկա Խազարաձեի մասին տարածած թյուր տեղեկատվությունը:***

Ընդունված որոշման համաձայն, թերթը իր իսկ կողմից հրապարակած թյուր տեղեկատվությունը հերքեց նույն էջում եւ նույն տառատեսակով, որով մինչ այդ տարածում էր վերոնշյալ տեղեկատվությունը:

TBC բանկը եւ Մամուկա Խազարաձեն «Ասավալ դասավալի» թերթի դեմ դատավարական հայտ էին ներկայացրել 2014 թվականի փետրվարին: Բողոքարկման պատճառը անձնական եւ բանկի վարկաբեկման երկարաժամկետ քարոզարշավն էր: Դատավարությունն ընթանում էր չորս տարվա ընթացքում եւ անցավ Վրաստանի դատարավարական իշխանության բոլոր ատյաններով: Բոլոր ատյաններում դատարանի որոշմամբ, խոսքը վերաբերում էր ինչպես TBC բանկի եւ նրա հիմնադրի վերաբերյալ թյուր տեղեկատվությանը, այնպես էլ Մամուկա Խազարաձեի պատվի, արժանապատվության եւ գործնական վարկանիշերի ոտնահարմանը:

Թյուր տեղեկատվության հերքումից բացի, դատարանի որոշման համաձայն, պարբերականը վճարեց նաեւ բարոյական վնասի փոխհատուցման նպատակով սահմանված գումարը: Մամուկա Խազարաձեի որոշմամբ, այդ գումարը՝ որպես կրթաթոշակ, տրվեց Թբիլիսիի պետական համալսարանի սոցիալական եւ քաղաքական գիտությունների ֆակուլտետի ժուռնալիստիկայի ուղղությամբ աչքի ընկած ուսանողներին:



### ՀԱՎԱՔ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

*Մայիսի 22-ին «Վրացական երազանք»-ի գրասենյակում անցկացվեց խորհրդարանական մեծամասնության նիստ: Հանդիպմանը, որին մասնակցեցին կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախի Կալաձեն, քննարկվեց թմրաքաղաքականության ազատականացման հարցը:*

*Հարցի առթիվ ելույթ ունեցավ խորհրդարանի առողջապահության կոմիտեի նախագահ Ակակի Զոիձեն: Նրա խոսքով, թմրաքաղաքականության առնչությամբ խստացվելու է օրենսդրությունը, իսկ թմրանյութ օգտագործողների նկատմամբ իրականացվելու է հումանիզացիա:*

### ՓՈԽՎՈՒՄ Է ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎՆԵՐԻ ԲԱԶԱՅՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

*Վրաստանի Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել անապահով բնակչության սոցիալական տվյալների բազայում գրանցման կետերից մեկը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է սոցիալապես անապահովների գրանցման կարգի մասին կառավարության որոշման 5-րդ հոդվածի 5-րդ կետը, ըստ որի, տվյալների բազայում գրանցման դիմումը չի ընդունվի, եթե դիմորդն ապօրինաբար զբաղեցնում է պետության սեփականության ներքո գտնվող բնակտարածքը, եւ այդ տարածքի օրինական սեփականատերը համաձայն չէ դրա հետ, ու ինչի մասին հայտնի է դարձել գործակալությանը սեփականատիրոջ դիմումից հետո:*

### 6079 ԱՎՏՈՎԹԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԶՈՀՎԵԼ Է 8461 ՄԱՐԴ

*Վրաստանի պետական աուդիտի ծառայությունը հրապարակել է 2017 թվականին ճանապարհային անվտանգության արդյունավետության վերաբերյալ հաշվետվությունը: 2017 թվականին Վրաստանի մասշտաբով գրանցվել է 6079 ավտովթար: Վերոնշյալ ավտովթարների արդյունքում զոհվել է 8461 մարդ: Ավտովթարների 47 տոկոսը տեղի է ունեցել Թբիլիսիում, թեպետ զոհերի քանակով, դրանց 49 տոկոսը բաժին է ընկնում տարածաշրջաններում տեղի ունեցած ավտովթարներին: Թբիլիսիում զոհերի թիվը կազմել է ընդհանուրի 17 տոկոսը:*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԵՐԻ ՆԵՐԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



***Մայիսի 23-24-ին Թբիլիսիում Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հյուրընկալեց հարկային վարչակազմերի ներեվրոպական կազմակերպության (IOTA) հարկային վարչակազմերի աշխատանքային խմբին:***

2017 թվականին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը, հարկային վարչակազմերի ներեվրոպական կազմակերպության (IOTA) ութ անդամ վարչակազմերի հետ միասին, ընտրվեց կազմակերպության գործադիր խորհրդի անդամ: Խորհուրդը, միամյա մանդատի շրջանակներում, անցկացնելու է աշխատանքային հինգ հանդիպում:

Մայիսի 23-ին կայացած հանդիպմանը, որին ներկա էր IOTA -ի նախագահ, Սլովակիայի հարկային վարչակազմի պետ Ֆրանտիսեկ Իմերեցը, խմբի անդամները քննարկեցին երկկողմ համագործակցության հարցեր եւ կազմակերպության աշխատանքի առաջիկա ծրագրերի ու կառավարման համակարգի զարգացման հետ առնչվող թեմաներ: Միաժամանակ, Վրաստանի ֆինանսների նախարարի առաջին տեղակալ, եկամուտների ծառայության հետ Գիորգի Թաբուաշվիլին խմբի անդամներին մանրամասն տեղեկություն ներկայացրեց ոլորտում իրականացված բարեփոխումների ընթացքի վերաբերյալ:

Հարկային վարչակազմերի ներեվրոպական կազմակերպության Թբիլիսիում անցկացված հանդիպմանը մասնակցեցին Վրաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Պորտուգալիայի, Սլովակիայի, Դանիայի, Լիտվայի եւ Մեծ Բրիտանիայի հարկային վարչակազմերի ներկայացուցիչները:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՄԱՅԻՍԻ 26-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ. ԴԱՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յունաբերության անկմանը եւ մթերքների գների ավելացմանը, ինչը Ռուսաստանի կայսրությանը հանգեցրեց աղետի:

Նիկոլայ Երկրորդ կայսրի հրաժարականից հետո, ձեւավորված Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը չկարողացավ կարգավորել իրավիճակը, այն չուներ զանգվածային աջակցություն, քանի որ չէր կարողանում համապատասխանորեն արձագանքել ժողովրդի պահանջին: Հենց այդ ժամանակ էլ ի հայտ եկան բոլշեւիկները, ովքեր, ինչպես վկայում են տարբեր աղբյուրներ, խրախուսվում էին Գերմանիայի իշխանությունների կողմից: Բեռլինը հետապնդում էր Ռուսաստանի ապակայունացման եւ Անտանտայից նրա չեզոքացման նպատակ, որը եւ հաջողությամբ իրականացվեց: 1917 թվականի հոկտեմբերին բոլշեւիկների ղեկավարությամբ սոցիալիստական հեղափոխությունը հաղթանակեց, եւ ժամանակավոր կառավարությունը տապալվեց: Ձեւավորվեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Վլադիմիր Իլյիչ Լենինի գլխավորությամբ: Նոր Ռուսաստանը դուրս եկավ Առաջին աշխարհամարտից: Անդրկովկասում գործող ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատը, որը դիմակայում էր օսմանյան թուրքերին, սկսեց աստիճանաբար փլուզվել:



Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Անդրկովկասի ժողովրդավարական կուսակցություններն անվստահություն հայտնեցին հեղափոխությանը: 1917 թվականի նոյեմբերի 11-ին Թբիլիսիում Անդրկովկասյան ժողովրդավարական կուսակցությունների (վրաց սոցիալ-ժողովրդավարների, հայ դաշնակների եւ ադրբեջանական մուսաֆաթականների) ու հասարակական կազմակերպությունների երկրամասային կենտրոնների նախաձեռնությամբ անցկացվեց ժողով, որտեղ որոշվեց ձեւավորել Անդրկովկասի ժամանակավոր կառավարություն (ժամանակավորապես, քանի դեռ Ռուսաստանում անիշխանությունը չէր հաղթահարվել): Նոյեմբերի 15-ին ձեւավորվեց ժամանակավոր կառավարություն, որը կոչվեց «Անդրկովկասյան կոմիսարիատ»:

Այդ ընթացքում, Կովկասյան տարածաշրջանում իրավիճակն արտակարգ սրվեց: Դրան ի պատասխան, «Անդրկովկասյան կոմիսարիատում» եւ երկրամասային խորհուրդներում մշակվեց գործողության ծրագիր, որպեսզի հիմնվի տեղական օրենսդրական մարմին՝ «Անդրկովկասյան սեյմ», որի առաջին գումարման ժամկետը ծրագրվեց 1918 թվականի փետրվարի 10-ին: Այդ ժամանակահատվածում Անդրկովկասում մեծ ժողովրդականություն էր վայելում ազգային ինքնիշխանության թեման: Ձեւավորվում էին վրացական, հայկական եւ ադրբեջանական ազգային մարմիններ, որոնք աստիճանաբար հիմքեր էին նախապատրաստում անկախության հռչակման համար:

1917 թվականի նոյեմբերին Վրաստանում հիմնվեց Վրաստանի ազգային խորհուրդը: Նոյեմբերի 19-ին Թբիլիսիում գանձատնային թատրոնում հավաքվեց վրաց հասարակայնության վերնախավի մի մասը եւ սկսեցին մշակել ազգային խորհրդի մեխանիզմը: Համագումարին ներկայացվեց բանաձեւ, եւ այն ընդունվեց: Արդյունքում հիմնվեց ազգային խորհուրդ, որտեղ միավորվեցին բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները: Նաեւ ձեւավորվեց 15 անդամից կազմված գործադիր կոմիտե, որը գլխավորեց Նոյե Ժորդանիան:

Անկախության հռչակման վերջին ազդակը Անտանտայից դուրս գալուց հետո Բրեստ-Լիտովսկի պայմանագրով ծագած հետեւանքներն էին, Ռուսաստանին տարածքների զիջման նպատակով, Գերմանիան ներկայացրեց վերջնագիր, ինչը ձեւակերպվեց 1918 թվականի մարտին՝ Բրեստ-Լիտովսկի համաձայնագրով: Ըստ այդ փաստաթղթի, քանի որ այն դեռ ընկալվում էր որպես Ռուսաստանի բաղկացուցիչ մաս, Անդրկովկաս (Հարավային Կովկաս) մուտք գործեցին Օսմանյան Թուրքիայի զորքերը եւ զավթեցին վրացական ու հայկական հողերը: Ծագեց Ռուսաստանից անկախ Թուրքիայի հետ բանակցություններ վարելու անհրաժեշտություն: Այդ պատճառով էլ հռչակվեց Անդրկովկասյան Դաշնային Ժողովրդավարական Հանրապետության (ԱԴԺՀ) անկախությունը: 1918 թվականի ապրիլ-մայիսին Տրապիզոնում եւ Բաթումիում Թուրքիայի ու ԱԴԺՀ-ի միջեւ տարվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին անարդյունք: Բանն այն էր, որ Բրեստ-Լիտովսկի համաձայնագրի պայմաններով, թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժումը Անդրկովկասյան սեյմում պառակտում առաջացրեց՝ ադրբեջանցիները պաշտպանեցին Թուրքիայի դիրքորոշումը, քանի որ ցանկանում էին Բաքվում Թուրքիայի օգնությամբ տապալել բոլշեւիկների իշխանությունը, իսկ վրացիներն ու հայերը ցանկանում էին պաշտպանել իրենց հարազատ երկիրը: Հետեւաբար, նրանք հանդես էին գալիս Թուրքիայի դեմ: Արդյունքում ծագեց Անդրկովկասյան սեյմի ցրման եւ ԱԴԺՀ-ի փլուզման անհրաժեշտություն:

Ահա այսպիսի բարդ իրավիճակում, 1918 թվականի մայիսի 26-ին անցկացվեց Վրաստանի ազգային խորհրդի վերոնշյալ նիստը: Հատկանշական է, որ Նոյե Ժորդանիայի ողջույնի խոսքում առանձնակի ընդգծվեց վրաց եւ հայ ժողովուրդների փոխկապակցվածությունը:

«Քաջատեղյակ եմ, որ Վրաստանը չի պայքարել մյուս ազգերի գոյության դեմ, ընդհակառակը, այն պայքարել է հօգուտ Վրաստանի տարածքում բնակվող ազգերի: Այսինքն, Վրաստանը հովանավորել է մյուս փոքր ազգերին: Հետեւաբար, մենք ցանկանում ենք դրացիություն եւ սերտ հարաբերություններ մեր շրջապատում ու մեզ մոտ ապրող ազգերի հետ: Առանձնակի ուշադրություն ենք հատկացնելու մի ազգի ողբերգությանը: Դա հայությունն է, որը չունի սեփական տարածք *(խմբ. այդ ժամանակ Անդրկովկասի ազգերից եւ ոչ մեկը չուներ առանձնակիորեն սահմանագծված տարածաշրջան)*, որպեսզի ձեւավորի իր պետությունը: Հավատում եմ, որ մեր նախնիների կտակն այսօր էլ կպաշտպանվի, եւ այդ հալածված ազգը այսօր էլ մեզանում կգտնի հովանավորություն, ինչպես եղել է մեր հաջողության ժամանակ: Մենք ցանկանում ենք բարեկամաբար ընդունել այն պետությունը, որը կծագի մեր հարեւանությամբ»,- հայտարարեց Նոյե Ժորդանիան:

Վրաստանի անկախության ակտում գրանցվեցին հետեւյալ դրույթները.

ա) Այսուհետեւ Վրաստանի ժողովուրդն ինքնիշխան իրավունքներ ունի, եւ Վրաստանը լիարժեք անկախ պետություն է, բ) անկախ Վրաստանի քաղաքական կարգը Ժողովրդավարական Հանրապետությունն է, գ) միջազգային դիմակայություններում Վրաստանը մշտապես չեզոք պետություն է, դ) Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը ցանկանում է միջազգային հանրության բոլոր անդամների հետ հաստատել բարիդրացիական հարաբերություններ՝ դա առանձնապես վերաբերում է սահմանակից պետություններին ու ազգերին, ե) Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունն իր սահմանների շրջանակներում հավասարապես ապահովում է բոլոր քաղաքացիների քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները՝ անկախ ազգային եւ սեռական պատկանելությունից, զ) Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունը զարգացման ազատ ասպարեզ կբացի իր տարածքում ապրող բոլոր ազգերի համար:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

# ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջում բազմակուսակցական սկզբունքով ստեղծվեց 15 հոգուց բաղկացած Հայոց ազգային խորհուրդ: Խորհրդի նախագահ ընտրվեց հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանը: Հայոց ազգային խորհուրդը փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը մինչեւ Հայաստանի անկախության հռչակումը: Մայիսի 26-ի երեկոյան գումարվեց Հայոց ազգային խորհրդի նիստը, որը ի գիտություն ընդունեց մայիսի 26-ին Վրաստանի անկախություն հռչակումը, միաժամանակ, Ազգային խորհուրդն իր վրա վերցրեց հայկական շրջանների նկատմամբ ժամանակավոր կառավարության գործառույթներ:



Հայոց ազգային խորհրդի մայիսի 27-ի երեկոյան նիստում ստեղծված կացության մասին հանգամանալիորեն զեկուցեցին Բաթումիից վերադարձած հայ պատվիրակներ Հ.Քաջազնունին եւ Ա.Խատիսյանը: Նրանք նույնպես ստեղծված կացությունից ելքը տեսնում էին Հայաստանի անկախության հռչակման մեջ:

Անկախության խնդիրը քննարկվեց նաեւ Հայոց ազգային խորհրդի մայիսի 28-ի նիստերում (առավոտյան եւ երեկոյան): Այդ օրը պետք է պատասխան տրվեր նաեւ Բաթումիում մայիսի 26-ին թուրքերի կողմից Անդրկովկասի դաշնությանը ներկայացրած վերջնագրին, քանի որ հաջորդ օրը լրանում էր վերջնագրի ժամկետը: Բուռն քննարկումներից հետո, Հայոց ազգային խորհուրդը որոշեց ընդունել թուրքերի վերջնագիրը՝ Բաթումի գործուղել նոր պատվիրակություն՝ Ա.Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան կազմով՝ տալով նրան բանակցելու եւ անկախ Հայաստանի անունից հաշտություն կնքելու անսահմանափակ լիազորություն: Սակայն անկախության պաշտոնական հայտարարության հարցը որոշ ժամանակով հետաձգվեց:

Հարկ է նշել, որ մայիսի 28-ին Թիֆլիսում, Արամյանցի տանը, Հայաստանի անկախության մասին վճիռը կայացվել է խորհրդի անդամների բուռն քննարկումների եւ խռովահույզ տրամադրությունների պայմաններում: Մայիսյան այդ ծանր ու ճակատագրական օրերին Հայոց ազգային խորհուրդը ներկայացնող քաղաքական ուժերը հանդես եկան գրեթե միասնական, ինչը պայմանավորված էր արտաքին վտանգով եւ, առաջին հերթին, թուրքերի ներխուժմամբ:

Հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, գումարված միացյալ նիստում մեկ անգամ եւս քննության առնվեց քաղաքական կացությունը, եւ որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն: Միաժամանակ, որոշվեց կազմել կառավարություն՝ միջկուսակցական սկզբունքով, ինչպես նաեւ ազգային խորհուրդն ու նորակազմ կառավարությունը տեղափոխել Երեւան, որը պետք է դառնար Հայաստանի նորանկախ Հանրապետության մայրաքաղաքը: Այդ նույն նիստում, Հ. Քաջազնունին առաջադրվեց կառավարության նախագահի (վարչապետի) պաշտոնի թեկնածու:

Միայն դրանից հետո, մայիսի 30-ին, Հայոց ազգային խորհուրդը կատարեց վճռական քայլը. որոշեց հայտարարություն անել Հայաստանի անկախության մասին: Հռչակագրի տեքստն ընդունվեց Հայոց ազգային խորհրդի կողմից, իսկ մայիսի 31-ին այն հրապարակվեց մամուլում: Եվ քանի որ Հայոց ազգային խորհուրդը մայիսի 28-ին վճիռ էր կայացրել Բաթումի ուղարկել նոր պատվիրակություն եւ անկախ Հայաստանի անունից բանակցել ու հաշտություն կնքել Թուրքիայի հետ, այդ իսկ պատճառով «Մայիսի 28-ը» Հայոց պատմության մեջ մտավ՝ որպես Հայաստանի անկախության օր:

Այդ օրերին հայ ժողովուրդն ունեցավ իր երկրորդ Ավարայրը: Նրա բազմադարյա պատմության մեջ տեղի ունեցան ամենավճռական ու բախտորոշ հերոսամարտերը՝ Սարդարապատը, Քաշ Ապարանը եւ Ղարաքիլիսան: «Մայիսի 28-ի» բանաձեւը իրավական վավերացումը եղավ Հայաստանում մղվող մայիսյան հաղթական հերոսամարտերի:

1918թ. հունիսի 13-ին նորընտիր վարչապետ Հ. Քաջազնունին ի լուր աշխարհի պաշտոնապես հայտարարություն արեց Հայաստանի անկախության մասին:

Հարյուրամյակների ընդմիջումից հետո, կրկին վերականգնվեց հայոց անկախ պետականությունը:

Հայաստանի առաջին հանրապետությունը արտաքին եւ ներքին ծանրագույն ու բարդ պայմաններում իր գոյությունը շարունակեց մինչեւ 1920 թվականի նոյեմբերը: Այն դարձավ Արեւելքում համաշխարհային հեղափոխության ալիքի տարածման բոլշեւիկյան Ռուսաստանի ղեկավարների ցնորամիտ քաղաքականության զոհը: